Ես էլ մատաղ մեր Սաքոյի երկար բոյին

Ես էլ մատաղ մեր Սաքոյի երկար բոյին, գյուլբաներին,
Չարոխներին, երկար վզին, ծակ քոլոզին:

Սաքոն տվեց սարը ելավ, աման, օյ, օյ, աման, օյ, օյ,
Սարի ծերին մոլոր մնաց, աման, օյ, օյ, աման, օյ, օյ,
Ուր է յարը մեր Սաքոյի, աման, օյ, օյ, աման, օյ, օյ,
Սաքոն սարը մենակ մնաց, աման, օյ, օյ, աման, օյ, օյ:

Ես էլ մատաղ մեր Սաքոյի երկար բոյին, գյուլբաներին,
Չարոխներին, երկար վզին, ծակ քոլոզին:

Հեռվից էկավ Մայրամ յարը, աման, օյ, օյ, աման, օյ, օյ,
Նաշխուն, սիրուն, անուշ յարը, աման, օյ, օյ, աման, օյ, օյ,
Սաքոն տեսավ, ուրախացավ, աման, օյ, օյ, աման, օյ, օյ,
Յարին գրկեց, սարեն իջավ, աման, օյ, օյ, աման, օյ, օյ:

Ես էլ մատաղ մեր Սաքոյի երկար բոյին, գյուլբաներին,
Չարոխներին, երկար վզին, ծակ քոլոզին: